Kh.A. SANOSYAN, A.S. ARAKELYAN

DEVELOPMENT OF METHODOLOGY FOR MANAGING THE TACTICAL TRAINING OF THE SPORTSMEN SPECIALIZING IN THE COMPLEX STYLE OF SWIMMING ON 100 m

A system of managing the complex swimming style on 100m distance is developed. The main components of the system are: predicting the outcomes in complex swimming at a distance of 100 *m* (by the average result of the four types of competitive swimming 100 *m*). The analysis of the ratio of the velocities of individual segments of the four types of competitive swimming of highly qualified (butterfly, free style, back, breaststroke) and low-skilled swimmers (with a different sequence of the speed ratio); calculation factors that predicted: 1) the end result according to the start, segments, turns and finish, 2) the calculation of the model parameters of technical elements (start, segments, turns and finish), is introduced, starting from the predicted result.

Keywords: complex swimming at a distance of 100 *m*, result, technical elements (start, lines, curves, and finish), relation of speeds, ratios, forecasting model parameters.

ՀՏԴ 005:797.21(378)

Խ.Ա. ՍԱՆՈՍՅԱՆ, Ս.Գ. ԿԱԿՈՅԱՆ, Կ.Լ. ՂԱՐԻԲՅԱՆ, Ա.Պ. ՄՍՐՅԱՆ, Մ.Ս. ԽՈՋՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՈՂ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ 2015 թ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԼՈՂԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվել է 2015 թ. ՀՀ ուսանողական սպարտակիադայում լողի առաջնությանը Պոլիտեխնիկական համալսարանի թիմի մասնակցության վերլուծությունը: Ըստ արդյունքների՝ ՀՀ ուսանողական առաջնություններում մրցանակակիր տղամարդկանց պատրաստվածությունը համապատասխանում է մարզական դասակարգման առաջին կարգին, աղջիկներինը՝ պատանեկան կարգի պահանջներին: Նշված չափանիշները պետք է լինեն ստորին շեմը ուսանող մարզիկներին հանրապետական ուսանողական մրցումներին պատրաստելիս:

Առանցքային բառեր. լող, ուսանողական խաղեր, մրցումներ, արդյունք, մարզական դասակարգման պահանջներ, տղամարդիկ, մեծահասակների առաջին կարգ:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է լող մարզաձևի ուսումնամարզական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիների որոնման անհրաժեշտությամբ:

Աշխատանքի նպատակն է վերլուծել 2015 թ. ՀՀ ուսանողական սպարտակիադայի ծրագրում լողի առաջնությանը Պոլիտեխնիկական համալսարանի թիմի մասնակցության արդյունքները:

Աշխատանքի խնդիրներն են. 1. ՀԱՊՀ-ում լող մարզաձևի ուսումնամարզական գործընթացի կազմակերպման առանձնահատկության վերլուծություն, **2.** 2015 թ ՀՀ ուսանողական սպարտակիադայում լողի առաջնությանը Պոլիտեխնիկական համալսարանի թիմի մասնակցության արդյունքների վերլուծություն**:**

Հետազոտության մեթոդներն են՝ մրցումների արձանագրությունների և արդյունքների վերլուծություն, գրականության ուսումնասիրում, մտային մոդելավորում:

Հետազոտության արդյունքները: ՀԱՊՀ-ում լող մարզաձևի ուսումնամարզական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունը բնորոշվում է աշխատանքների կազմակերպման հետևյալ ուղղություններով.

"Ֆիզիկական կուլտուրա" առարկայի շրջանակում լողի մասնագիտացված դասերի կազմակերպում, մարզական կատարելագործման խմբերի և ՀԱՊՀ-ի լող մարզաձևի հավաքականի մարզական գործընթացի կազմակերպում,

արտալսարանային պայմաններում ուսանողների, աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև բնակչության լողի ուսուցում,

սելեկցիոն աշխատանք (ՀԱՊՀ ընդունվող լող իմացող և բարձր արդյունքների հակում ունեցող առավել ընդունակ ուսանողների և բարձրակարգ մարզիկների բացահայտում) համալսարանում և բնակչության շրջանում:

Լողավազանի վերանորոգման պայմաններում, համագործակցելով ,,Սպիտակ,, գիտակրթական կենտրոնի լողավազանի հետ, կազմակերպվում են ուսումնամարզական խմբերի՝ լողի հավաքականի մարզումները: Խմբերը կոմպլեկտավորվում են կարգային մարզիկներով:

Արտալսարանային աշխատանքը, լողավազանի վերանորոգման պայմաններում, ներկայումս կատարվում է սահմանափակ տիրույթում: Լողի ուսուցման գործընթացը բնակչության շրջանում կատարվում է դասախոսների սեփական նախաձեռնությամբ: Լողավազանում կոմպլեկտավորվում են լողի ուսուցողական խմբեր, որոնք աշխատում են վարձակալական հիմունքներով:

Մարզական կատարելագործման խմբերի և ՀԱՊՀ-ի լող մարզաձևի հավաքականի մարզական գործընթացի կազմակերպումը ցույց է տրված աղյուսակում:

Աղյուսակ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի լող մարզաձևի հավաքական թիմի 2015 թ.հանրապետական ուսանողական լողի առաջնության մասնակիցների որակական կազմը և արդյունքները [1]
*(հավաքականի մարզիչներ՝ **Ս. Կակոյան, Խ. Մանոսյան**)*

Ա.Ա.Հ.	Ակ. Խումբ/ Մարզ. Կարգ	Վարժ 50 մ	արդյունք/տեղ
Տեր-Հարությունյան Արամ	Էտ 208-3, 1 կարգ	թիկնալող	0.31.52. II տեղ
		ազատ ոճ	0.27.87
Մելիքսեթյան Արթուր	Գ 435, 1 կարգ	ազատ ոճ	0.26.34 III տեղ
		դելֆին	0.29, 0 II տեղ
Մանուկյան Հռիփսիմե	Ռ 316-2, պատ. կարգ	թիկնալող	1.00.38 III տեղ
		ազատ ոճ	0.58.14
Սարգսյան Կիմա	Հ 455-1, պատ.	ազատ ոճ	0.42.34 IVտեղ
Հինդոյան Սարգիս	Ռ316-2/3 կարգ	ազատ ոճ	0. 34.43.
Ստեփանյան Արթուր	Ռ 416-3, 3 կարգ	բրաս	0.42.0
		դելֆին	0.46.22
Ստեփանյան Հայկ	Ռ 416-3, պատ. Կարգ	ազատ ոճ	0.42.99
		դելֆին	0. 36.81.
Մորալյան Հայկ	Մ 310,3 կարգ	ազատ ոճ	0. 33.53.
Զոլախյան Էրիկ	L529, պատ. Կարգ	ազատ ոճ	0. 39.54
		դելֆին	0. 48.35
Երյոմին Դմիտրի	Հ 419-2, պատ. Կարգ	ազատ ոճ	0. 48.57
		թիկնալող	0. 39.88
Միքայելյան Գոռ	Տ 512, պատ. Կ.	ազատ ոճ	0. 35.0
Սարգսյան Թելման	Էտ 508-2, 3 կ.	ազատ ոճ	0. 30
Հովհաննիսյան Մարիամ	Տ 241	ազատ ոճ	0.59.80
Թադևոսյան Արփեն	Հ 419-2	թիկնալող	1.01.22

Մարզական կատարելագործման խմբերում ներգրավվում են լողի պատրաստություն ունեցող և կարգային մարզիկները: Աղյուսակում ներկայացված են հավաքականի ուսանողական խաղերին մասնակից մարզիկների որակավորման տվյալները: Մրցանակակիր տղաների արդյունքը համապատասխանում է ՀՀ մարզական դասակարգման մեծահասակների առաջին կարգի ցուցանիշներին: Աղջիկների դեպքում մրցանակային տեղ ապահովելու համար բավարար է պատանեկան կարգի արդյունքը: Բոլոր մասնակիցները բարելավել են սեփական արդյունքները, հաստատել են իրենց մարզական կարգը: Ամեն մասնակից իրավունք ուներ ելույթ ունենալու երկու վարժությունում: Ընտրվել էին մարզիկի համար առավել նախընտրելի վարժություններ: Համալսարանի հավաքականից մրցումներին մասնակցել են 15

ուսանող մարզիկներ, համալսարանի վեց ֆակուլտետներից (Էլեկտրատեխնիկական՝ 2 ուսանող, մեքենագիտական՝ 1, մեքենաշինական՝ 1, ռադիոտեխնիկական՝ 4, ընդերքաբանության՝ 2, տրանսպորտային համակարգերի՝ 1, քոմփյութերային համակարգերի և ինֆորմատիկայի՝ 4): Համալսարանի ուսանողները նվաճել են չորս մրցանակային տեղ: Մրցանակակիրները՝ Էլեկտրատեխնիկական, Ռադիոտեխնիկական և Մեքենագիտական ֆակուլտետների ներկայացուցիչներն են (տե՛ս աղյուսակը): Բարելավվել են մրցումների մասնակից հավաքական թիմի անդամների մարզական որակը և արդյունքները: Նկատի առնելով, որ մրցումները կազմակերպվել էին հոկտեմբերի երկուսին, այն ուսանողները, ովքեր ունեին հավասար հնարավորություններ, բայց ամառվա ամիսներին ընդհատել էին մարզումները, մրցումների մասնակիցների կազմում չէին ընդգրկվել:

Եզրակացություններ: Լողավազանի չգործելու պայմաններում ՀԱՊՀ-ի լողի մարզիչները կարողացել են կոմպլեկտավորել հավաքականը և կազմակերպել ուսումնամարզական գործընթացը՝ արժանավայել մասնակցելով ՀՀ 2015 թ. ուսանողական սպարտակիադայում լողի առաջնությանը:

Մրցանակիր տղաների արդյունքը համապատասխանում է ՀՀ մարզական դասակարգման մեծահասակների առաջին կարգի ցուցանիշներին:

Մրցանակիր աղջիկների արդյունքը համապատասխանում է ՀՀ մարզական դասակարգման պատանեկան կարգի ցուցանիշներին:

Նշված չափանիշները պետք է լինեն նպատակային՝ ապահովելով ստորին շեմը ուսանող մարզիկներին հանրապետական ուսանողական մրցումներին պատրաստելիս:

Համալսարանի հավաքականի հաջողությունը լողի բաժնի դասախոսների հետևողական և համագործակցված գործունեության հետևանք է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Սանոսյան Խ.Ա., Առաքելյան Ա.Ս.** Լողորդի տակտիկական պատրաստության կառավարման ժամանակակից համակարգ. Ուսումնական ձեռնարկ.- Եր.: Ճարտարագետ, 2011.-110 էջ:

Х.А. САНОСЯН, С.Г. КАКОЯН, М.С. ХОДЖОЯН, К.Л. ГАРИБЯН, А.П. МСРЯН

АНАЛИЗ РЕЗУЛЬТАТОВ ПЕРВЕНСТВА СБОРНОЙ КОМАНДЫ ПО ПЛАВАНИЮ НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ НА РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ СПАРТАКИАДЕ 2015 ГОДА

Представлен анализ итогов участия на Студенческой спартакиаде 2015 г. сборной команды по плаванию Национального политехнического университета Армении. Результаты победителей соревнований соответствуют нормативным классификационным требованиям первого взрослого разряда для мужчин и юношеского – для женщин. Эти нормативы являются нижней границей модельных параметров при подготовке пловцов студентов к участию к студенческим республиканским соревнованиям.

Ключевые слова: плавание, студенческие игры, соревнования, результат, классификационные требования, мужчины, первый взрослый разряд.

Kh.A. SANOSYAN, S.G. KAKOYAN, M.S. XOJOYAN, K.L. GARYBYAN, A.P. MSRYAN

THE PERFORMANCE ANALYSIS OF THE SWIMMING TEAM OF NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF ARMENIA NATIONAL IN THE REPUBLICAN STUDENT SPORT COMPETITIONS OF 2015

The analysis of the results of the students` participation in the sport competition of 2015 of the national swimming team of National Polytechnic University of Armenia is introduced. The results of the winners of the competition meet the standard classification requirements of the first adult category for the adult men and for Junior women. These standards are the lower border of the model parameters in training the students' swimmers to participate in students republican competitions.

Keywords: swimming, student games, competitions, results, classification requirements, men, first adult level.